ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«31» մայիս 2024թ. **ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. 2-րդ շենք**
Հեռ. (+37412) 27-27-27

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ Ա. ՇԵԳՈՒՆՑԻՆ

Հարգելի՛ պարոն Շեգունց,

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ի միջև 2024թ. փետրվարի 22-ին կնքված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/4-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 3-րդ, 10-րդ, 13-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ և 45-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԼԻՆԱՐԵ ՄԵԴ» ՍՊԸ-ն: Սակայն, ըստ Հայաստանի Հանրապետության Պետական վերահսկողական ծառայության կողմից ստացած Ե/965-24 թիվ գրության, «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ն 2023թ. դեկտեմբերի 23-ից մինչև 2025թ. դեկտեմբերի 23-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընկերության տնօրեն Արթուր Ռոբերտի Շեգունցի և «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ ընկերության տնօրեն Արթուր Ռոբերտի Շեգունցը հանդիսանում է «ԼԻՆԱՐԵ» ՍՊԸ-ի 100% բաժնեմասի սեփականատեր: Ինչպես նաև, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 03/26-1/10071-2024 թիվ գրության, եթե մասնակիցը կամ վերջինիս հետ փոխկապակցված կազմակերպությունները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելուց հետո մասնակցել են գնման գործընթացին և վերջինիս հետ կնքվել են պայմանագրեր, ապա այդ պայմանագրերը միակողմանի լուծվում են և ձեռնարկվում են միջոցներ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Բացի այդ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Նշված կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք 10 բանկային օրվա ընթացքում «Այ Դի բանկ» ՓԲԸ-ի **11813017106900-ի** վրա փոխանցել որակավորման ապահովման՝ **248 585 ՀՀ դրամը** և պայմանագրի ապահովման **165 710 ՀՀ դրամ գումարները**, ընդամենը՝ **414 295 ՀՀ դրամ** և վճարման կտրոնները ներկայացնել ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգողին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Digitally signed by NAZINYAN SUREN 3103820607
Date: 2024.05.31 11:14:57 AMT

Ս. ՆԱԶԻՆՅԱՆ